

սունք իսկ ըստ օրինի անուտելի էին՝ Փարպեցւոյն եւ Խորենացւոյն վերոյիշեալ սահմանին համեմատ, եւ ոչ թէ անոնց սատակը միայն: Հին օրէնքէն զարտուղութիւններ կը նշմարուին թռչնոց մէջ ալ. այսպէս փորն արգելուած Մովսիսէ (Բ Օր. ԺԳ, 16), կերակուր էր և դարու Հայոց (Փրպ. 26):

Մեռեալ անասնոց առաւելագոյն անսրբրութիւնն ակներեւ է Փաւստոսի վկայութենէն ալ, որ կը պատմէ Ս. Ներսեսի համար՝ թէ կանոն դրաւ «հրաժարել ամենեւին ի մեռելոտոյ եւ յարևև ուտելոյ», զորս պիղծ կը համարէր (76): Եւ այս պատուէրս՝ որ կը բղխէր հարկաւ վերոյիշեալ առաքելական սահմանէն ու մովսիսականէն միանգամայն (Ղեւտ. ԺԷ, 10-5. Բ Օր. ԺԳ, 21), ցոյց կու տայ եւ զայս՝ թէ Հայք աչդ նիւթերէն դեռ չէին խորշեր. այնպէս որ Հարք զգուշացնելու համար զանոնք՝ կը հարկադրէին յաւիտենական պատիժ սպառնալ: «Մեռելոտի ուտել եւ զարխև անասնոց ըմպել, կ'ըսէ Յաճախապատումը, եղկութիւն եւ թշուառութիւն առաջի կայ» (71): Հաւանօրէն իւր ըսածին ինք ալ համոզուած էր:

Այդ շրջանին անսուրբ ուտեստներէն մին ալ էր կոոց զո՛նկայր, դարձեալ հին կտա-